ԿՐՕՆԱԳԻՏԱԿԱՆ

Տ. ԲԱԳՐԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻԻՆ ՄԱՏՈՒՅՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(01 մարտի, 2015 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հայր, մեղա՛յ յերկինս եւ առաջի քո»
(Ղուկ. ԺԵ. 18):

Դեպի Սուրբ Հարության խորհուրդ մեր ճամփորդության երրորդ հանգրվանն է սա, երրորդ կիրակին, երբ առերեսվում ենք ինքներս մեր նկարագրի էությանը եւ խորքերին: Քառասնօրյա մեր ողջ ընթացքը, խորհրդածության ու խոկման, աղոթքի եւ ապաշխարության իր հանգրվաններով, պատկերագիրն է մարդու ճամփորդության՝ սկսած Աստծո իրական մտերմության մեջ ապրելու պատմությունից՝ ինքնաարտաքսում, վերադարձ, տնտես լինելու իրականություն, դատավոր լինելու ճշմարտություն... մինչեւ Սուրբ Հարություն՝ մարդու հաղթանակը մեղքի ու մահվան նկատմամբ: Երրորդ կիրակին սահմանված եւ բնութագրված է որպես «Անառակ», «Կորուսյալ որդու» կամ «Վերադարձի» կիրակի:

Եկեղեցական նշանավոր հայր Հովհան Ոսկեբերանը, խոսելով այս առակի մասին, նկատում է, որ «այս փոքրիկ պատմությունն իսկ բավարար է՝ Աստծո էությունն ու մարդու նկարագիրը ցույց տալու եւ նկարագրելու համար»: Ըստ էության, մեր Տերն առակը պատմում է մեղսագործ մարդկանց, այդ օրերի իշխաններին ու հասարակության տարբեր շերտերի ներկայացուցիչներին, որոնք իրենք իրենց արդար էին համարում, սակայն ավետարանիչը չի մոռանում խոսել նաեւ նրանց մեղսավորության մասին: Առակը մի ընտանիքի, հասարակական կարգի մասին է, որտեղ կրտսեր որդին հորից, դեռեւս նրա կենդանության օրոք, իր բաժինն է պահանջում. «Հա՛յր, տո՛ւր քո ունեցվածքից ինձ ընկնող բաժինը» (Ղուկ. ԺԵ. 11): Հայրը տալիս է նրա բաժինը, որդին գնում է, հեռանում իր բնակավայրից, Հոր եւ ընտանիքի ջերմությունից, խնամքից ու ապահովությունից՝ ընտրելով այն կյանքը, որին ձգտում էր եւ տենչում: Սակայն որոշ ժամանակ

անց մսխում է իր հարստությունը եւ, ի վերջո, հայտնվելով անելանելի վիճակում, հասկանում է. «Վերադարձ... վերադառնամ հայրական օջախ, այլ կերպ չեմ կարող քավել իմ մեղքը, քան վերադառնալ եւ ասել. «Հա՛յր մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ եւ այլեւս արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ վերցրո՛ւ իբրեւ քո աշխատավորներից մեկը» (հմմտ. Ղուկ. ԺԵ. 18-19): Հայրը, սակայն, ընդառաջ է գնում՝ չսպասելով, որ որդին մոտենա իրեն, գրկում է նրան, հայրական ջերմություն ու զուրգուրանք ցույց տալով փարիներով բացակայող որդուն՝ ասելով. «Մեռած էիր ու կենդանացար, կորած էիր եւ գտնվեցիր» (հմմտ. Ղուկ. ԺԵ. 24): Հայրը շարունակ կրկնում էր այդ խոսքերը. նա խնջույք էր կազմակերպել, մորթել էր պարարտ եզը, լավագույն պատմուճանն էր հագցրել իր զավակին, իշխանության մատանին էր դրել մատին, ուրախությունից ցնծում էր ողջ ընտանիքը: Այդ ընտանիքի ավագ որդին, երբ վերադարձավ աշխատանքից, չկարողացավ ընդունել, ընկալել այդ իրականությունը եւ ներքին ընբոստություն, տվայտանք ապրեց, եւ հարցեր առաջացան, թե ինչպե՞ս կարող է փառաբանվել մեկը, որը ոչ միայն ունեցվածքն էր վատնել, այլեւ խաթարել էր ողջ ընտանիքի անդորրն ու հանգիստը: Սակայն հայրը նրան խաղաղեցրեց՝ կրկնելով նույն խոսքերը. «...պետք էր ուրախ լինել եւ ցնծալ, որովհետեւ քո այս եղբայրը մեռած էր եւ կենդանացավ, կորած էր եւ գտնվեց» (Ղուկ. ԺԵ. 32):

Չգիտենք, թե ինչ ընթացք են ստանում հոր ու եղբայրների հարաբերությունները, առակում չի խոսվում նաեւ մոր ներկայության մասին: Չենք տեսնում ընտանիքի հետագա կյանքը, թե ինչպես էին նրանք ապրում: Արդյո՞ք ավագ որդին ներքին ընդվզումների պատճառով լքեց հայրական տունը, իսկ կրտսեր որդին չշարունակե՞ց ապրել այնպես, ինչպես ապրում էր վերադարձից առաջ:

Արդյո՞ք հայրը կարողացավ խաղաղությամբ ապրել եւ հաշտեցնել իր երկու որդիներին... Ոչինչ չգիտենք այդ մասին, սակայն գիտենք, որ այս առակի միջոցով արտահայտվում է մեղսագործ եւ սխալական մարդու զղջումն ու ապաշխարանքը. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դեմ ու քո առաջ» (Ղուկ. ԺԵ. 18 19): Այն նկարագրում է նաեւ երկնային Հոր անսահման սերն ու անափ ներողամտությունը եւ ողորմածությունը Իր զավակների նկատմամբ:

ԻԱ. դարում ենք ապրում եւ այն մեզ այլ բան չի թելադրում, քան աղճատում ու հեռացում թե՛ Աստծուց եւ թե՛ մարդուց: Անառակ որդու մասին այս առակը մարդու՝ մեղքի գիտակցմանը հասնելու, զղջալու եւ ապաշխարելու նկարագրությունն է: Այսօր քաջ գիտակցելով մեր մեղանչականությունը՝ մերժում, չենք ընդունում մեր գործած սխալներն ու արատավոր արարքները:

Աստծուն հետեւելու կանոնը խարսխված է երկու սկզբունքի վրա. «Պիտի սիրես քո Տեր Աստծուն քո ամբողջ սրտով, քո ամբողջ հոգով ու քո ամբողջ մտքով...» եւ երկրորդը սրա նման է. «պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ. 37-39): Դատավորի առակում հետագայում տեսնում ենք արդարության նույն բանաձեւումը (Ղուկ. ԺԸ. 12):

Իսկ ինչ ենք անում մենք... այդ բանաձեւման բացակայության պատճառով չե՞ն մեր թերացումները, անկումները, անհանդուրժողականությունը, ժխտողականությունը՝ լինեն տնտեսական ոլորտում, հանրային կյանքի հարաբերություններում, իրավական դաշտում: Հանրային կյանքում մեր գիտակցությունը պետք է հիմնված լինի չորս կարեւոր արժեքների վրա՝ արդարություն, ճշմարտություն, իրավունք եւ պարտականություն: Անառակ որդու առակն իրավունքի շեփորահարումն ու փողահարումն է: Արդարության ու պատասխանատվության վերականգնումն ի վերջո հանգեցրեց նրան, որ ընտանիքն ապրի հաշտության եւ խաղաղության մեջ:

Հենց այդ նույն զավակի նկարագիրն ունենալու պատճառով Աստված մեզ կանչում է դադարի, մի պահ մտածելու՝ լինի դա առատության, ուրախության ժամանակ, թե ամենադժվար պահին. մենք հրավեր ունենք լինելու ու ապրելու աստվածային ճշմարտությունների լույսի ներքո, որը կապահովի մեր վերադարձը դեպի մեր հայրական տուն՝ լինել Աստծո առջեւ հավատարիմ եւ մարդկանց հանդեպ սիրով: Յուրաքանչյուրս անառակ որդի ենք, կորուսյալ զավակներ ենք մինչեւ այն պահը, երբ գիտակցաբար կասենք. «Հա՛յր, մեղք գործեցի քո ու երկնքի առջեւ»: Թող մեր քառասնօրյա ճամփորդությունը դեպի Սուրբ Հարության հաղթանակը մեզ միայն ու միայն վերադարձի մասին հիշեցնի, արքայության եւ մեր պատասխանատվության, ճշմարտությունը խոսելու եւ մեր պարտականությունը կատարելու մասին հիշեցնի: Թող Աստված լցնի մեր կյանքը խաղաղությամբ, մեզ շնոհի ու պարգեւի Իր ներկայության երջանկությունը, երբ մեզ իբրեւ Հայր կասի. «Մեռած էիր, կենդանացար, կորած էիր եւ գտնվեցիր» (Ղուկ. ԺԵ. 24). ամեն: